

**ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵՋ**

Ապահովագրական համակարգի, ինչպես նաև դրա ենթակառուցվածքների (ապահովագրական ընկերությունների) ֆինանսական կայունության գնահատումը բարդ խնդիր է և կապված է տարբեր բնույթի ռիսկերի կառավարման հետ: Դրանց դիմակայելու ունակությունը կախված է այն մոտեցումների ընտրությունից և կիրառումից, որոնք կարող են մեծապես չեզոքացնել կամ էականորեն մեղմել այդ ռիսկերով պայմանավորված վտանգները:

Ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակը կախված է բազմաթիվ գործոններից: Ակնհայտ է, որ դրանց մի մասը չի ենթարկվում քանակական վերլուծության: Այդպիսի գործոնների շարքին կարելի է դասել կառավարման որակը, կազմակերպչական կառուցվածքների ընտրությունը, վերահսկողության արդյունավետությունը և այլն: Այս ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար, անշուշտ, անհրաժեշտ է ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշների գնահատման համար հիմնավոր ու արդյունավետ մոտեցումների մշակում:

Ապահովագրողի ֆինանսական կայունության բազմակողմանի վերլուծության մեջ քանակական տեղեկատվությունը հաճախ ձևավորում է ելակետ: Եվ իրոք, քանակական ցուցանիշների կիրառումը թույլ է տալիս վերահսկող մարմիններին կազմակերպել իրենց աշխատանքը և կենտրոնանալ առավել ռիսկային ընկերությունների վրա և, այդպիսով, հասնել նրանց սահմանափակ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման:

Ապահովագրողների ֆինանսական կայունության վերաբերյալ քանակական տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը սթրես թեստավորումն է՝ գործունեության բազմագործոն ռիսկերի թեստավորումը (stress test):

Սթրես թեստը վերաբերում է մեթոդների այն խմբին, որոնք օգտագործվում են՝ ռիսկի գլխավոր գործոնների նկատմամբ ապահովագրական պորտֆելի, ընկերության կամ սեկտորի խոցելիությունը գնահատելու համար: Ապահովագրողների կողմից գնահատվող ռիսկերը ներառում են ապահովագրական ռիսկերը, մակրոտնտեսական գործոնների և շուկայական գների փոփոխությունները և այլն:

Սթրես թեստավորման անհրաժեշտությունը նաև ապահովագրողների վերահսկողության մարմինների միջազգային ասոցիացիայի (IAIS) ուշադրության կենտրոնում է: Դա է վկայում Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված ուղեցույցը, որի համաձայն, վերահսկող մարմինները պետք է պահանջեն, ապահովագրողներն իրականացնեն սթրես թեստավորում մի քանի սցենարներով, որը թույլ կտա գնահատել կապիտալի համարժեքությունը¹: Շատ միջազգային կառույցների կողմից սթրես թեստի իրականացումը պարտադիր է: Սթրես թեստը պետք է ապահովի տարբեր իրավիճակների որակական և քանակական ուսումնասիրություն:

Սթրես թեստն այն անհրաժեշտ գործիքներից մեկն է, որն օգնում է ապահովագրողին՝ կառավարելու իր ռիսկերը և պահպանելու համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ այդ

¹ IAIS: Stress testing by insurers: Guidance paper October 2003:

ռիսկերին ղիմակայելու համար: Այն հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչ կարող է տեղի ունենալ որոշակի սցենարների դեպքում:

Ապահովագրական գործունեությունը կապված է անորոշության հետ: Այդ պատճառով ապահովագրական ընկերությունները պետք է հաշվի առնեն հնարավոր տարբերակների լայն սահման, որոնք կարող են ազդել ընկերության ինչպես ներկա, այնպես էլ հետագա ֆինանսական վիճակի վրա: Սթրես թեստն անհրաժեշտ է ինչպես ապահովագրողներին, այնպես էլ վերահսկող մարմիններին, որը թույլ կտա պարզել՝ արդյոք ապահովագրական ընկերությունն ի վիճակի կլինի՞ ղիմակայել հնարավոր մի քանի սցենարների դեպքում առաջացող սպասելի կորուստներին: Սթրես թեստն անհրաժեշտ է նաև ապահովագրական ընկերության մենեջմենթի համար, որի արդյունքներն օգնում են որոշումներ կայացնել: Ընդ որում, պետք է նշել, որ կարևորվում է այն հանգամանքը, որ այն ապահովագրական ընկերության համար լինի իր ռիսկերի կառավարման տեսակետից ֆունդամենտալ տարր, այլ ոչ թե դիտարկվի որպես վերահսկող մարմինների կողմից պարտադրված լրացուցիչ բեռ: Ապահովագրողն այն պետք է դիտարկի իր հետագա ռազմավարությունները մշակելիս: Վերահսկող մարմինների տեսակետից վերահսկողներին պետք է հասանելի լինեն սթրես թեստի արդյունքները: Վերահսկող մարմիններն ապահովագրական ընկերություններից կարող են պահանջել իրականացնել լրացուցիչ հետազոտություններ, եթե արդյունքները չբավարարեն:

Սթրես թեստն ունի բազմաթիվ տեսակներ, որոնք հիմնականում բաժանվում են երկու մեծ խմբի: Այն կարող է ներառել առանձին ռիսկի կամ միանման ռիսկերի գործոնի փոփոխության ազդեցության գնահատականը (զգայական վերլուծություն) կամ ռիսկի գործոնների խմբում միաժամանակյա շարժի արդյունավետությունը (սցենարների վերլուծություն): Դրանք հիմնված են ոչ սովորական, բայց ոչ անհնարին սցենարների վրա:

Lloyd's-ի «Իրական աղետների սցենարներ»-ը կարող են օրինակ ծառայել սթրես թեստերի համար, որոնք կենտրոնացած են ապահովագրական ռիսկերի վրա: Լոյդսի սինդիկատները պետք է ավարտին հասցնեն սահմանված 16 սցենարներից առնվազն 8-ը: Այդ սցենարների հիմքում ընկած են, սկսած Միացյալ Նահանգների փոթորիկներից և Ճապոնիայի երկրաշարժերից, ընդհուպ մինչև ծովային պատահարները և ավիացիայի բախումները, ինչպես նաև քաղաքական ռիսկերը:

Սցենարների թեստը նույնպես ունի երկու հիմնական տեսակ՝ պատմական և վարկածային: Պատմական սցենարներն արտացոլում են ռիսկային գործոնների այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել պատմական սպեցիֆիկ էպիզոդներում: Վարկածային սցենարների դեպքում կիրառվում են շոկային մի քանի տարբերակներ, որոնք հավանական են, բայց դեռ տեղի չեն ունեցել: Յուրաքանչյուր տեսակն ունի իր առավելությունները: Հարկ է նկատել, որ սթրես թեստի մշակման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

- հետազոտությունների համադրումը, որը ներառում է ակտուարական, հաշվապահական, տնտեսագիտական, իրավաբանական և ֆինանսական հետազոտությունները,
- ապահովագրողի գործունեության ըմբռնման խորությունը,
- այն ռիսկերի տարանջատման ունակությունը, որոնք պոտենցիալ նյութական ազդեցություն կարող են ունենալ ապահովագրողի ֆինանսական դրության վրա,
- ռիսկերի ազդեցության սահմանները գնահատելու ունակությունը,
- կառավարման մոդելի ընտրության հիմնավորումը:

Առավել արդյունավետ է, երբ յուրաքանչյուր ապահովագրող ինքն է մշակում թեստը՝ հաշվի առնելով իր սեփական ռիսկերի պորտֆելը և գործունեության բարդությունը: Այս թեստը հնարավորություն է տալիս հաշվի առնել այնպիսի ռիսկային գործոններ, որոնք հեշտությամբ չի կարելի հաշվարկել կամ մոդելավորել: Այդպիսի ռիսկերից են, օրինակ, հայցերի հետ կապված դատական որոշումները, հեղինակության ռիսկը, հարկային օրենսդրության փոփոխությունները

և այլն: Վերահսկող մարմինները կարող են ժամանակ առ ժամանակ պահանջել որոշակիորեն ստանդարտացված թեստերի իրականացում: Սթրես թեստի բնույթի և սահմանների որոշման նպատակով պետք է հաշվի առնել բազմաթիվ գործոններ՝ իրականացվող ապահովագրության դասերը, ընկերության դիրքը շուկայում, ներդրումային քաղաքականությունը, գործարար ծրագիրը, ընդհանուր տնտեսական պայմանները և այլն: Նպատակահարմար է սթրես թեստի իրականացումը նվազագույնը տարին մեկ անգամ, բայց առավել փոփոխական պայմանների դեպքում այն կարելի է իրականացնել տարվա մեջ մի քանի անգամ:

Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության կանխատեսման տեսակետից սթրես թեստավորման անհրաժեշտությունն արդիական խնդիր է արդեն մասնավորապես Հայաստանում: Հարկ է նկատել, որ առայժմ չկա այն իրականացնելու որևէ օրենսդրական պահանջ: Մեկ անգամ ևս փաստենք, որ ապահովագրական ընկերությունների սթրես թեստավորումը դրական ազդեցություն է ունենում ինչպես ապահովագրական ընկերությունների գործունեության վրա՝ բացահայտելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, այնպես էլ ապահովագրական շուկայի զարգացման վրա: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է ՀՀ-ում մույնպես ստեղծել ապահովագրական ընկերությունների սթրես թեստավորման մեխանիզմ: Սթրես թեստը պետք է մատչելի լինի գործնական կիրառելիության տեսանկյունից և ընդունելի լինի ինչպես ապահովագրական ընկերությունների, այնպես էլ վերահսկող մարմնի համար: Հաշվի առնելով ՀՀ ապահովագրական շուկայի առանձնահատկությունները՝ մեր կարծիքով առավել արդյունավետ է սթրես թեստի սցենարային տեսակի իրականացումը: Սթրես թեստի կիրառման դեպքում ՀՀ-ում անհրաժեշտ կլինի իրականացնել այն սցենարները, որոնք առավել բնորոշ են հայկական ապահովագրական շուկային և ընկերությունների գործունեության օրինաչափություններին: Միաժամանակ, թեստի չափանիշերը նպատակահարմար է ժամանակ առ ժամանակ փոփոխել կամ թարմացնել՝ ելնելով նոր ձևավորվող օրինաչափություններից և միտումներից: Սթրես թեստի կիրարկումն ապահովելու համար այն համապատասխան ձևով պետք է փաստաթղթավորվի կամ կանոնակարգվի ձևային առումով, որպեսզի ապահովվի մասնավորապես արդյունքների կանխարգելիչ բնույթը: Սթրես թեստի սահմանումից է կախված դրա ներդրման արդյունավետությունը: